ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Մեթոդաբանությունը բնութագրում է.

- գնահատման հիմնական նպատակները, խնդիրները, սկզբունքները և գործառույթները,
- սովորողների ուսումնական գործունեության ընթացքի և արդյունքների գնահատումը կարգավորող սկզբունքները, մոտեցումները, մեթոդները,
- գնահատման տեսակները և ստուգման ձևերը:

Նպատակը

Ուսումնառության արդյունքների գնահատման նպատակն է՝ որոշել սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:

Խնդիրները

- գնահատման տարբեր ձևերի և տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն տալ սովորողներին առավելագույնս ցուցաբերել իրենց գիտելիքները, կարողությունները և հմտությունները,
- գնահատման չափանիշների հստակեցման միջոցով բարելավել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,
- ձևավորող գնահատման կանոնակարգման շնորհիվ ավելացնել սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող առարկաների նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը,
- խթանել սովորողի ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը, նպաստել նրա անձնային որակների և դիրքորոշումների ձևավորմանը,
- բարձրացնել ուսուցիչների պատասխանատվության և մասնագիտական պատրաստվածության աստիճանը:

Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:

Գնահատման գործընթացի հիմքում ընկած են **հուսալիության**, **հավաստիության**, **մատչելիության**, **օբյեկտիվության**, **արդարության և թափանցիկության** սկզբունքները:

Սկզբունքները

Հուսալիություն

Հուսալիությունը ստուգման գրանցված արդյունքի հարաբերական կայունությունն է: Գնահատումը համարվում է հուսալի, եթե տարբեր ժամանակներում անցկացված ստուգման արդյունքները գրեթե նույնն են նույն խմբին, անձին նույն թեստով ստուգելու դեպքում: Օրինակ՝ եթե ձեր ժամացույցը 5 րոպե առաջ է ցույց տալիս իրական ժամից, սակայն, ամեն անգամ ժամը ճշտելիս դուք գիտեք, որ այն ժամը սխալ է ցույց տալիս, բայց սխալը հարաբերական կայուն է, այսինքն՝ միշտ 5 րոպե է առաջ, ապա ձեր ժամացույցը հուսալի է, բայց ոչ ճշգրիտ:

Նույն երևույթը դիտարկենք դպրոցական գնահատման համատեքստում: Դուք գնահատումն իրականացնում եք սովորողների միջև համեմատական սկզբունքով: Եթե տվյալ սովորողին

նշանակում եք 4 միավոր, ինչ-ինչ պատճառներով ավելի ցածր չեք ուզում նշանակել, մյուս երեխաներին գնահատում եք՝ առաջնորդվելով նախորդի 4 միավորի համեմատությամբ: Նման գնահատումը կարելի է համարել հուսալի, բայց ոչ հավաստի:

Հավաստիություն

Գնահատման հավաստիությունը (վավերականությունը) ցույց է տալիս գնահատման ճշգրտությունը, թե որքանով է գնահատումը համապատասխանում հստակ մշակված չափանիշներին և ցույց է տալիս գնահատվողի իրական կարողունակությունները: Գնահատման հավաստիությունը նաև մեծապես կախված է գնահատման նպատակից և ընտրված գործիքից: Օրինակ, փորձենք պատկերացնել կշեռք, որը ամեն անգամ ձեր կշիռը ցույց է տալիս X կգ, և այն համապատասխանում է իրականությանը, քանի որ դուք հենց կշռում եք X կգ: Այս տվյալը կարելի է համարել հավաստի, քանի որ այն համապատասխանում է իրականությանը և ճշգրիտ է: Այս օրինակից կարելի է եզրակացնել, որ գնահատումը միշտ պետք է ձգտի հավաստիության:

Փորձենք դիտարկել նախորդ սկզբունքի օրինակով. եթե 4 միավոր ստացող սովորողին գնահատեիք՝ պահպանելով հավաստիության սկզբունքը, ապա նա և մյուս սովորողները, հավանաբար, հավասարապես կստանային ավելի ցածր միավորներ: Նման գնահատումը կլինի հավաստի, քանի որ կարտահայտի սովորողների գիտելիքների և հմտությունների գործող չափանիշներին համապատասխանությունը: Եթե ստուգման արդյունքը հավաստի է, այն գրեթե միշտ հուսալի է: Հավաստի գնահատումը գրեթե միշտ հուսալի է, սակայն հուսալին միշտ չէ, որ հավաստի է:

Օբյեկտիվություն

Օբյեկտիվ գնահատումը ստուգման միջոց է, որի դեպքում տրված հարցերն ունեն մեկ ճիշտ պատասխան: Օբյեկտիվ գնահատման ամենատարածված ձևերից են բազմակի ընտրության համապատասխանեցման, լրացման, պնդում և պատճառ, ճիշտ/սխալ պատասխանով առաջադրանքները:

Օբյեկտիվ գնահատումն ունի իր ուրույն նշանակությունը, քանի որ այն կարող է չափել աշակերտի կարողությունների բոլոր մակարդակները՝ հիշողությունից մինչև սինթեզ:

Բացի այդ, օբյեկտիվ գնահատումը չպետք է կախում ունենա գնահատողի սուբյեկտիվ գործոնից և պետք է իրականացվի հստակ չափանիշներին համապատասխան:

Մատչելիություն

Գնահատումը կարելի է համարել մատչելի (հասանելի), երբ կիրառվում են այնպիսի ձևեր և առաջադրանքներ, որոնք համապատասխանում են տվյալ տարիքային և անհատական զարգացման առանձնահատկություններին: Այսինքն՝ ուսումնառության արդյունքների գնահատման համատեքստում մատչելիությունը վերաբերում է սովորողի կարողունակությունները ցուցաբերելու հնարավորության ընձեռնմանը:

Մատչելիությունը կարևոր նախապայման է գնահատման մյուս սկզբունքերի ապահովման հարցում: Օրինակ, եթե կոնկրետ տարիքային խմբի համար փորձենք կիրառել փորձաքնված հավաստի և հուսալի գնահատման միջոցներ, սակայն հաշվի չառնենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (լսողական, տեսողական և այլն) սովորողների համար խելամիտ հարմարեցումները, ապա նման գնահատումը չի կարող համարվել մատչելի, հուսալի և հավաստի:

Արդարություն և թափանցիկություն

«Արդարություն» տերմինը սահմանվում է որպես «մարդկանց հետ հավասար կամ ողջամիտ, ինչպես նաև անկողմնակալությամբ և ազնվությամբ վերաբերմունքի որակ»: Այս սահմանումները ենթադրում են, որ գնահատման գործընթացներն արդար են, եթե դրանք զերծ են կողմնակալության տարբեր դրսևորումներից: Գնահատումը կարող է համարվել արդար, եթե այն անհիմն արտոնություն չի տալիս գնահատվող սովորողների որոշակի խմբին:

Պարզ բառերով, արդարությունը «կողմնակալության բացակայությունն է. գնահատման գործընթացում բոլոր սովորողների հանդեպ արդար վերաբերմունքի և նյութը սովորելու հարցում հավասար հնարավորությունների ընձեռումը: Գնահատման ընթացքում կարևոր է ապահովել սովորողի տեղեկացված լինելը. նա պետք է հասկանա և կարողանա մասնակցել գնահատման գործընթացին և համաձայնի, որ գործընթացը տեղին է: Այն նաև ներառում է գնահատվող անձի կողմից գնահատման արդյունքը վիճարկելու և անհրաժեշտության դեպքում վերագնահատվելու հնարավորություն: Արդար և թափանցիկ լինելու պարագայում գնահատումը չպետք է խտրականություն դնի սովորողների միջև, այն պետք է բացառապես հիմնվի բոլորին հավասար հնարավորություններ ապահովելու վրա՝ հաշվի առնելով գնահատվողի կարողությունների մակարդակը:

Գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի և դժվարությունների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է հիմք հանդիսանալ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելու համար:

Գնահատման տեսակները

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ, որոնք հաջորդում եմ մեկը մյուսին և կարող են պարբերաբար կրկնվել նշված հաջորդականությամբ.

1) հայտորոշիչ (դիագնոստիկ) գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում:

Այս հայտորոշիչ-ձևավորող-ամփոփիչ շղթան կարելի է անգամ մեկ դասի ընթացքում անել՝ փոքրիկ փուլի մեջ և այդ փուլերը կարող են կարճատև և երկարարտև լինել՝ դասից մինչև ենթաթեմա, թեմա, կիսամյակ կամ տարի (կետ 39): Գնահատման տարբեր տեսակների ժամանակ կիրառվում են բազմազան գործիքներ, ընդ որում՝ միևնույն գործիքը կարող է կիրառվել գնահատման բոլոր տեսակների դեպքում: Կարևոր է, թե ինչ նպատակով է կիրառվում այդ գործիքը և թե ինչպես են օգտագործվելու տվյալ գնահատման արդյունքները:

Հայտորոշում

Ուսուցման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է սովորողի կարողունակության առկա մակարդակի ճիշտ հայտորոշմամբ (դիագնոստիկա):

Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողների նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, նոր թեմայի կամ դասի ուսումնասիրման մեկնարկից առաջ:

Հայտորոշիչ գնահատման արդյունքում պետք է բացահայտվի, թե սովորողն ինչ գիտի, չգիտի, կամ սխալ գիտի ուսուցանվող թեմայի վերաբերյալ, ինչն էլ հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության բովանդակությունը, գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:
Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողների տարիքային առանձնահատկություններից:
Հայտորոշման համար կարելի է կիրառել որոշ մեթոդներ, որոնք բացահայտում են թեմայի վերաբերյալ սովորողների ֆոնային գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումներն ու արժեքները: Օրինակ՝ մտքերի տարափ, քարտեզագրում, փոխներգործուն նշանների համակարգ, ԳՈՒՍ, մտածիր-զույգ կազմիր-կիսվիր, 5-րոպեանոց շարադրանք և այլն:
Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է ուսուցչի կողմից, որի արդյունքում միավորային գնահատում չի իրականացվում: Հայտորոշիչ գնահատման համար որոշ դեպքերում կարող են տրվել կողմնորոշիչ բալեր, նիշեր, որոնք չպետք է նույնացվեն 10-միավորային սանդղակի միավորների հետ:
Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) թեստ
2) բանավոր հարցում
3) բաց հարցերով քննարկում
4) գրավոր աշխատանք
5) գործնական աշխատանք
6) և այլն
Հայտորոշման որոշ ձևերի դեպքում կարելի է կիրառել որոշ մեթոդներ, որոնք առավելապես բացահայտում են թեմայի վերաբերյալ սովորողների ֆոնային գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումներն ու արժեքները: Օրինակ՝ մտքերի տարափ, քարտեզագրում, փոխներգործուն նշանների համակարգ, ԳՈՒՍ, մտածիր-զույգ կազմիր-կիսվիր, 5-րոպեանոց շարադրանք և այլն:

Հայտորոշիչ թեստ

Ուսուցիչներն ուսումնական տարվա սկզբում, կամ որևէ ուսումնական փուլ սկսելուց առաջ, սովորողներին հանձնարարում են լրացնել նախնական հայտորոշիչ թեստ, որպեսզի կարողանան ճիշտ պլանավորել սովորողների հետագա ուսուցման և ուսումնառության գործընթացը՝ հաշվի առնելով թեստի արդյունքները: Հայտորոշիչ թեստի հարցերի քանակը կախված է մեկնարկվող թեմատիկ փուլի տևողությունից, որն ուսուցիչը նպատակ ունի հայտորոշել, ձևավորող գնահատում իրականացնել և ամփոփել: Եթե փուլը կարճ է (դաս, ենթաթեմա և այլ), հարցերը և առաջադրանքները կարող են լինել փոքրաթիվ 3-5 առաջադրանք և կարճ ժամանակում կատարելու համար, իսկ երկարատև փուլի համար (թեմա, կիսամյակ, տարի, կրթական աստիճան և այլ) կարող են լինել քանակով ավելի շատ և ավելի երկար ժամանակի համար: Երկարատև փուլի համար անցկացվող հայտորոշիչ թեստի առաջադրանքների քանակը կախված է սովորողների տարիքային խմբի և դասավանդվող թեմայի առանձնահատկություններից, սակայն ժամանակը չպետք է գերազանցի 30 րոպեն:
Հայտորոշիչ թեստի հիմնական հատկորոշիչները, որոնք կազմում են, այսպես կոչված, թեստի «նախագիծը», որոշում են թեստի կառուցվանքն ու բովանդակությունը: Դրանք են՝

- Ո՞ր դասարանի համար է նախատեսված:
- Ի՞նչ կոնկրետ նպատակ է հետապնդում:
- Ո՞ր թեմայի կամ թեմաների վերաբերյալ է կազմված:
- Ո՞ր վերջնարդյունքներն են ստուգվելու:
- Ի՞նչ տիպի առաջադրանքներ են մշակվելու:
- Ի՞նչ բարդության աստիճանի առաջադրանքներ են ներառվելու և ինչ համամասնությամբ:
- Քանի՞ առաջադրանք է ներառվելու:
- Ի՞նչ տիպի առաջադրանքներ են ներառվելու:
- Որքա՞ն ժամանակ է հատկացվելու թեստի լրացմանը:

Հայտորոշիչ թեստի առանձնահատկություններն են՝

1. Ստուգում են սովորողների ընդհանրական, ֆոնային գիտելիքները մեկնարկվող նոր թեմայի, թեմաների վերաբերյալ:
2. Օգտագործվում են տարբեր տիպի առաջադրանքներ՝ փակ և բաց հարցերով, որոնք ենթադրում են մեկ ճիշտ պատասխան պահանջող՝ բազմակի ընտրության, լրացման, հաջորդկանության վերականգնման կամ համապատասխանեցման առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:
3. Հարցերը պետք է ձևակերպվեն կարճ, պարզ և մատչելի:
4. Առաջադրանքները պետք է դասավորված լինեն պարզիցմիջին բարդության: Հայտորոշիչ թեստերում ցանկալի չէ ներառել բարդ առաջադրանքներ, սակայն կարելի է ստուգել նաև նախատեսվող թեմայի վերաբերյալ երեխայի կարողությունները, ներուժը, իսկ այդ հարցերը կարող են տվյալ փուլի համար բարդ թվալ, քանի որ դեռևս չեն ուսումնասիրվել:

Կարևոր է որոշել յուրաքանչյուր սովորողի գիտելիքները, հմտությունները ինչպես նաև ներուժը տվյալ թեմայից:

Բանավոր հարցում Նախնական հայտորոշման մյուս ձևը բանավոր հարցումն է: Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Այն ավելի ամբողջական պատկերացում է տալիս աշակերտի մտածելու, տրամաբանելու, վերլուծելու, կարծիքը հիմնավորելու, ստեղծագործելու կարողությունների մասին:

Բանավոր հարցումը կարող է լինել անհատական և խմբային, սակայն ստուգման այս ձևը հնարավորություն չի տալիս միաժամանակ ստուգելու և ամրագրելու բոլորի նախնական գիտելիքներն ու հմտությունները:

Գրավոր աշխատանք

Կախված նպատակից հայտորոշման ձև կարող են ծառայել նաև գրավոր աշխատանքները, ինչպիսիք են՝ թելադրությունը, շարադրությունը, փոխադրությունը, էսսեն, թեստը, բաց հարցերով կարճ շարադրանք պահանջող առաջադրանքները:

Գործնական աշխատանք

Գործնական աշխատանքի միջոցով հայտորոշում կարելի է իրականացնել՝ որոշելու համար, թե ինչ հմտությունների և կարողությունների է տիրապետում սովորողը, որոնք կարող են հիմք հանդիսանալ մեկնարկվող թեմայի ուսումնասիրման համար:

Օրինակ՝ լեզուների դասավանդման ժամանակ դերախաղի կազմակերպում, թեմատիկ ֆիլմի դիտում և մեկնաբանում և այլն: Բնագիտական առարկաների դեպքում՝ փորձերի նախապատրաստում և անցկացում, չափումներ և այլն: Տեխնոլոգիա, կերպարվեստ, երաժշտություն, ֆիզիկական կուլտորա և այլ առարկաների հայտորոշումը առավելապես հարմար է գործնական աշխատանքների կիրառմամբ:

Ձևավորող գնահատում

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները, ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:
Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում, այլ՝ սովորողի սեփական արդյունքների համեմատում:

Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:
Ձևավորող գնահատումն ապահովում է.
1) ներառական, փոխներգործուն և համագործակցային ուսուցման ու ուսումնառության միջավայրի ստեղծում,
2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապ,
3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության որակների ձեռքբերում:

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում
- Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:
- Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:
- Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:

Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք հաստատվում են առարկայական մեթոդմիավորման կողմից և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:
Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:
Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի կողմից՝ ինքնագնահատման, փոխադարձ գնահատման միջոցով:

Ուսուցչի և սովորողների կողմից գործածվող գնահատման ձևերը կարող են նույնը լինել, օրինակ՝ թեստ, քննարկում, նախագիծ և այլն:
Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ)
2) բանավոր հարցում
3) գրավոր աշխատանք (թելադրություն, փոխադրություն, շարադրություն, արտագրություն և այլն)
4) գործնական աշխատանքներ
5) տնային աշխատանք
6) թղթապանակ
6) նախագծային աշխատանք
Ձևավորող գնահատման ձևերից յուրաքանչյուրի համար սահմանվում են չափանիշներ: Չափանիշները պետք է լինեն հստակ և ճշգրիտ, որպեսզի գնահատումը լինի օբյեկտիվ:
Չափանիշների հիման վրա ապահովվում է ուսուցչի և սովորողի միջև հետադարձ կապը, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողը ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ որոնք ուղղված են սովորողի ուսումնառության արդյունքները բարելավելուն:
Ձևավորող գնահատում իրականացնելիս օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի տրվում:
Ձևավորող գնահատում անընդհատ գործընթաց է, որը պետք է իրականացնել յուրաքանչյուր դասին: Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:
Ձևավորող գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է, ոչ թե սովորողը և ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր ձևերի և տեսակների ընտրության հիմքը ուսուցման նպատակի հստակ ձևակերպումն է:
Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.
- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:
- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչը պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գիտենք, որ չափազանց կարևոր է սովորողների ակտիվ մասնակցությունը իրենց ուսումնական գործընթացին և ձևավորող գնահատման ճիշտ և պարբերական կիրառումը կապահովի ցանկալի ներգրավվածությունն ու ակտիվ մասնակցությունը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների

մշակման մասնակից: Նպատակներն ու վերջնարդյունքները կարելի է ներկայացնել, որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ինքնագնահատում

Ինքնագնահատումը ձևավորող գնահատման կարևոր բաղադրիչներից է, առանց որի ձևավորող գնահատումը չի կարող արդյունավետ լինել: Ինքնագնահատման և փոխադրած գնահատման կարևոր առանձնահատկությունը գնահատողի դերի ստանձնումն է: Ինքնագնահատման և փոխադարձ գնահատման դեպքում գնահատողը սովորողն է:
Սովորողի ուսումնական առաջընթացի համար կարևոր հիմք են նրա ճիշտ պատկերացումներն ուսումնական նյութի իր իմացության մակարդակի ու սեփական ուժերով թերությունները վերացնելու կարողության մասին: Այդ նպատակներին է ծառայում ինքնագնահատման կանոնավոր կիրառումը:
Որպեսզի հստակ ընկալվի, թե ինքնագնահատումը որքանով կարող է նպաստել սովորողի ուսումնառության արդյունավետությանը, անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռել և օգնել՝ անդրադառնալու հետևյալ անհրաժեշտ գործողություններին .

- որպես մտածող և սովորող իր գիտելիքի մակարդակը ինքնուրույն պարզելուն,
- սեփական ուսման որակը բարելավելու միջոցներ փնտրելուն և դրանք կիրառելու ռազմավարություն մշակելուն:
- առաջադրանքը հստակ պատկերացնելուն,

Ինքնագնահատման նպատակն է՝ ընդլայնել աշակերտի ճանաչողությունը, ինքնաճանաչումը, արժեքային համակարգը, ինչպես նաև ձևավորել պատասխանատվություն: Առաջադրանքի վերլուծությունից հետո կարևոր է, որ աշակերտը տեսնի և հասկանա ձեռքբերումներն ու դժվարությունները և դրանց շտկման համար դրսևորի համապատասխան վերաբերմունք, ձգտում և կամք: Օրինակ, եթե ուսուցչի հետ միասին կարդում են շարադրությունը, և սովորողը կարողանում է նկատել իր սխալներն ու թերությունները և ասել, թե ինչպես կարելի է շտկել, դա ինքնագնահատման դրսևորում է:
Որպեսզի ուսանելը լինի արդյունավետ, սովորողին պետք է հասցնել իր ձեռքբերումների առկա և վերջարդյունքների միջև եղած տարբերության նվազեցնելու գիտակցությանը: Այդպիսի որակներով օժտված սովորողն ուսուցչի ուղղորդմամբ կարող է վերացնել իրական և ցանկալի արդյունքի միջև եղած ճեղքվածքը:
Եթե սովորողը հաճախ կատարի ինքնագնահատման աշխատանքներ, ապա դա նրան կօգնի ճիշտ պատկերացում կազմել իր ձեռքբերումների և դժվարությունների մասին՝ պատասխանատու դառնալով իր ուսումնառության համար:
Ինքնագնահատումը սովորողից պահանջում է իր կատարած աշխատանքների նկատմամբ հետադարձ դատողություններ անելու կարողություն, որն արդյունավետ սովորելու համար կարևոր առանձնահատկություն է:
Սովորողի ինքնագնահատման գործում կարևոր դեր է վերապահված ուսուցչին: Նա պետք է օգնի սովորողին հասկանալ, թե ինչին և ինչպես պետք է փորձի հասնել: Նպատակը

սովորողին հասկանալի դարձնելուց հետո, ուսուցչի հաջորդ խնդիրը սովորողի անելիքները պարզաբանելն էորը նրան կհասցնի հաջողության: Ինքնագնահատման հմտությունների ձևավորումը սովորողին հնարավորություն է տալիս արժեքավոր դատողություններ անել իր և այլոց ձեռքբերումների վերաբերյալ, համեմատել իր ներկա և պահանջվող մակարդակները, հեշտությամբ վերացնել սեփական թերությունները:
Ինքնագնահատում իրականացնելու համար կարելի կիրառել ձևավորող գնահատման տարբեր գործիքներ, ինչպիսիք են, օրինակ՝ հարցաթերթերը, գնահատման անիվը, ստուգաթերթերը, ելքի քարտերը և այլն: Ձևավորող գնահատման ցանկացած գործիք կարելի է կիրառել ինքնագնահատման և փոխադարձ գնահատման նպատակով: Կարևոր է, որ ցանկացած գործիք կիրառելիս պահպանվեն և կիրառվեն գնահատման նույն չափանիշները, այսինք՝ եթե նույն գործիքով գնահատում է և ուսուցիչը և սովորողները, ապա գնահատումը պետք է իրականացվի նույն չափանիշներով, որոնք նախապես հայտնի են գնահատողներին և գնահատվողներին:

Փոխադարձ գնահատում

Փոխադարձ գնահատման միջոցով սովորողները տեղեկանում են իրենց աշխատանքի ուժեղ և թույլ կողմերի, սխալների մասին, անհրաժեշտության դեպքում ստանում են լրացուցիչ առաջադրանքներ և հանձնարարություններ՝ բացթողումները լրացնելու համար:
Փոխադարձ գնահատում իրականացնում են

1. սովորողը՝ սովորողին,
2. խումբը՝ խմբին,
3. սովորողը՝ խմբին,
4. խումբը՝ սովորողին:

Կարևոր է, որ ուսուցչի կամ դասընկերոջ կողմից ապահովվի սովորողի առաջընթացը խթանող հետադարձ կապ. դա կօգնի սովորողին գնահատել իր ուսումնառության ընթացքը: Էական է, որ փոխստուգում իրականացնող սովորողն իր դասընկերոջ աշխատանքը գնահատելիս լինի օբյեկտիվ:
Այս գործընթացը զարգացնում է սովորողի մտածողությունը և տրամաբանությունը. ամեն անգամ սովորողը ընկերոջ սխալները նկատելիս՝ անում է համապատասխան պարզաբանումներ, բերում հիմնավորված և փաստարկված օրինակներ: Դրանով բարձրանում է նրա ուսումնառության արդյունավետությունը և արժևորվում նրա ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները:
Փոխադարձ գնահատումը նպաստում է, թե գնահատողի, թե գնահատվողի սեփական իմացության վերարժևորմանը: Դա առաջընթացը խթանող հանգամանք է, քանի որ սովորողներից պահանջվում է՝

- անձնական մեծ պատասխանատվություն,
- անդրադարձ սեփական ուսումնառությանը,
- ինքնարժևորում ու գնահատման հիմնավորում:

Փոխադարձ գնահատման և ինքնագանահատման աշխատանքների շնորհիվ ուսումնական գործընթացում պահովվում է յուրաքանչյուր սովորողի գործուն ընդգրկվածությունը:

Գրավոր կարճ հարցում

Ձևավորող գտնահատման ձևերից է գրավոր կարճ հարցում իրականացնելիս պետք է ուշադրություն դարձնել, թե ով է գնահատելու, ում ենք գնահատելու, ինչ գիտելիքներ և հմտություններ ենք ստուգելու և ինչպես ենք օգտագործելու գնահատման արդյունքները: Կախված թեմայի ուսուցման նպատակից և թեմայի յուրացման արդյունքում ակնկալվող վերջնարդյունքներից՝ որոշվում են բովանդակությունը և ստուգման մեթոդաբանությունը:

Օրինակ՝ ուսուցիչը կարող է առաջադրանքների ճիշտ պատասխանները նախապես գրել գրատախտակին կամ ցուցապաստառին և սովորողներին ցույց տալ առաջադրանքի կատարման ավարտից հետո: Սովորողները հնարավորություն կունենան համեմատելու իրենց աշխատանքի արդյունքները ճիշտ պատասխանների հետ և ինքնուրույն շտկելու բացթողումները:

Գրավոր կարճ հարցումը կարելի է անցկացնել նաև թեստի միջոցով բնութագրիչ առանձնահատկություններ են.

- նախատեսվում է կարճ ժամանակի համար (5-10 րոպե)
- կազմվում են նույն գիտելիքը, կարողությունը կամ հմտությունը ստուգող հարցեր կամ առաջադրանքներ (2-3 հարց, կամ մեկ պարզ առաջրանք), ,
- հարցերը մատչելի են սովորողների մեծ մասի համար արդյունքները հեշտ վերլուծելի են
- ստուգվում են տեղում և հետադարձ կապը տրվում է անմիջապես

Բանավոր հարցում

Ձևավորող գնահատման ձևերից մեկը բանավոր հարցումն է, որն իրականացվում է բոլոր դասարաններում և բոլոր առարկաներից: Բանավոր հարցման ժամանակ պետք է հաշվի առնել բանավոր խոսքին առնչվող որոշակի չափանիշներ: Բանավոր հարցման միջոցով ստուգվում է, ինչպես սովորողի մտապահման ու վերարտադրման, այնպես էլ նյութի գիտակցված ընկալման, վերլուծության մակարդակը:

Բանավոր հարցման ձևեր են մտքերի տարափը, հարց ու պատասխանը, զրույցը, ուսումնական նյութի վերարտադրումը, բանավեճը, դեբատը, երկխոսությունը, նախագծերի ներկայացումը, դերային խաղը, մենախոսությունը, շնորհանդեսների ներկայացումը և այլն:

Բանավոր հարցման ընթացքում կարող են կիրառվել բանավոր խոսքի գնահատման տարբեր ռուբրիկներ՝ կախված այն բանից, թե ինչ նպատակով և բանավոր խոսքի ինչ ձև են կիրառվելու:

Բանավոր հարցման նպատակն է՝ պարզել սովորողի՝ մտքերը քերականորեն և շարահյուսորեն ճիշտ ձևակերպելու, խոսքը տրամաբանորեն շարադրելու, հակիրճ և ընդարձակ ձևակերպելու (ըստ անհրաժեշտության), գլխավոր միտքը դուրս բերելու, փաստարկելու, վերլուծելու և հիմնավորելու կարողությունները: Բանավոր հարցման միջոցով կարող է պարզվել նաև սովորողների հաղորդակցվելու կարողությունը:

Այս բոլոր կարողությունները կարող են գնահատվել բանավոր խոսքի ստուգման համար մշակված տարբեր ռուբրիկներով: Արդյունքները ամփոփելուց հետո ուսուցիչը և սովորողները ծրագրում են նկատված թերությունները վերացնելու ուղիները:

Գրավոր աշխատանք

Գրավոր աշխատանքները կիրառվում են գնահատման բոլոր տեսակների պարագայում, սակայն տարբեր նպատակներով: Ձևավորող գնահատման տեսանկյունից կարող են տրվել գրավոր աշխատանքի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են արտագրությունը, թելադրությունը, շարադրությունը, էսսեն, փոխադրությունը և այլն:

Դիտարկենք գրավոր աշխատանքի տեսակներից մեկը՝ թելադրությունը ձևավորող գնահատման տեսանկյունից:

Թելադրության միևնույն տեքստի վրա կարելի է ձեռնարկել որոշակի քայլեր՝ երեխային աստիճանաբար ակտիվ սովորող դարձնելու համար: Ուսուցիչը կարող է աշխատանքում նշումներ չկատարել Այլ կանաչ գույնի գրիչով դուրս բերել սովորողի թույլ տված սխալներն վրիպակներն ու ջնջումներն իրենց ճիշտ տարբերակով, և տալ առաջադրանք՝ դրանք տեքստում ինքնուրույն գտնելու և ուղղելու:

Առաջադրանքը կատարելու համար սովորողը «ստիպված է լինելու» առնվազն մի քանի անգամ կարդալ տրված օրինակները, տեքստում դրանք գտնել և ինքնուրույն ուղղել, ինչը ոչ թե մեխանիկական, այլ ակտիվ մտածական աշխատանք է (համեմատում տվյալ դեպքում): Այս դեպքում ուսուցչի և սովորողի գործողությունները հավասարակշռվում են: Այս, և այլ տարբերակներ կարելի է գտնել հետևյալ հղմամբ՝

https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_69.html

Ուսուցիչն ավելի ակտիվ դեր է հատկացնում սովորողին, որն արդեն ոչ միայն ինքնուրույն կողմնորոշվում, այլև ինքնուրույն բարելավում է սեփական աշխատանքը՝ առաջնորդվելով ուսուցչի պայմանական նշաններով: Գնահատման նույն սկզբունքները կարելի է կիրառել նաև գրավոր աշխատանքի այլ տեսակների դեպքում: Կարևոր է պահպանել ձևավորող գնահատման բաղադրիչների ամբողջականությունն ու հաջորդականությունը: Միշտ պետք է հիշել հետադարձ կապի մասին. առհասարակ ցանկացած աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները:

Աշխատանքի կազմակերպման այս մոտեցումը կիրառելի է դպրոցի բոլոր աստիճաններում և բոլոր ուսումնական առարկաների շրջանակում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունները:

Գործնական աշխատանք

Սովորողի ձեռք բերած գիտելիքները հիմնավոր և օգտակար կլինեն այնքանով, որքանով նա կարող է դրանք կիրառել: Այդ գիտելիքները կիրառելու կարողությունը զարգացնելու նպատակով անհրաժեշտ են գործնական աշխատանքները: Ելնելով ուսումնական առարկայի առանձնահատկություններից՝ գործնական աշխատանքները կարող են լինել տարբեր՝ տեղանքում կողմնորոշվել, չափումներ կատարել, քարտեզագրել, գործիքներով աշխատել, փորձեր կատարել, մոդելավորել, մակետներ, պաստառներ, տեսանյութեր ստեղծել, բանավեճ, քննարկում, դերախաղ իրականացնել, ՏՀՏ գործիքներ կիրառել և այլն:

Գործնական աշխատանքը ձևավորող գնահատման արդյունավետ ձևերից է, որի նպատակն է հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված 8 առանցքային կարողունակությունների զարգացման ապահովումը:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

- *վերարտադրողական*, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը (օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր և այլն),
- *մասամբ որոնողական*, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրը (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա),
- *ստեղծագործական*, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ՝ կազմել տեղանքի քարտեզը, ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլև վերառարկայական հմտություններ):

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:

Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքով, դպրոցում, տանը կամ այլ վայրում, գնահատվել բալերով կամ բառային բնութագրումներով: Արդյունքները կարող են ներկայացվել սովորողի կամ սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով:

Տնային աշխատանք

Սովորողն իր անհատական կամ համագործակցային աշխատանքները կատարելու է նաև տանը: Ուսուցիչը դասի ընթացքում կամ դրանից դուրս պետք է կարողանա ստուգել և սովորողի հետ վերլուծել տնային աշխատանքներում ցուցաբերած առաջընթացն ու թերությունները: Տնային հանձնարարությունները պետք է լինեն ոչ մեծ ծավալի, որպեսզի չզբաղեցնեն սովորողի հանգստի, խաղի, սնվելու, նախասիրությամբ զբաղվելու և քնի համար նախատեսվող ժամանակը և տնային աշխատանքի համար պետք է հանձնարարել դասարանում կատարած առաջադրանքների նմուշներից: Կարելի է նաև տնային աշխատանքեր հանձնարարելիս կիրառել տարբերակված մոտեցում: Տնային աշխատանքը նպաստում է սովորողի ինքնուրույն և խմբային աշխատանք կատարելու կարողության զարգացմանը: Տնային աշխատանքների ստուգումը, քննարկումն ու վերլուծությունը պետք է արվեն հնարավորինս հաճախ, որպեսզի ձևավորվի պատասխանատվություն և տնային աշխատանքի կարևորության ընկալում: Սակայն պետք է նշել, որ պարտադիր չէ յուրաքանչյուր դասից հետո տնային աշխատանք հանձնարարելը, հատկապես, եթե ուսուցիչը վստահ է, որ երեխաները յուրացրել են ուսումնական նյութը:

Ուսումնական թղթապանակ

Յուրաքանչյուր սովորողի համար ստեղծվում է սովորողի ձեռքբերումների թղթապանակ, որի մեջ ներառվում են սովորողի ամփոփիչ գնահատումների արդյունքները, ինչպես նաև սովորողի կողմից ընտրված աշխատանքները:

Թղթապանակը սովորողի «ուսումնառության պատմությունն» է, նրա հաջողությունների, անձի զարգացման, ստեղծագործական աճի վկայությունը՝ կոնկրետ օրինակների և ուղեկցող դիտարկումների տեսքով: Թղթապանակը ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և պահման լավագույն տարբերակներից է, որը ծառայում է սովորողի առաջընթացն ու ձեռքբերումները տեսանելի դարձնելուն: Թղթապանակը կազմվում է մեկ ուսումնական տարվա համար և տարեվերջին ծնող - ուսուցիչ հանդիպման ժամանակ հանձնվում է սովորողի ընտանիքին: Ուսումնական թղթապանակի բովանդակության մաս են կազմում նաև սովորողի վերաբերյալ ուսուցչի, համադասարանցիների, ծնողների նշումները, դիտարկումները և սովորողի հետ զրույցների, հարցազրույցների նկարագրությունները:

Ուսումնական թղթապանակը նպաստում է սովորողների, ուսուցիչների համագործակցությանը, հնարավորություն է ընձեռում գնահատելու ուսման ընթացքում ներդրված ջանքերը, ձեռքբերումներն ու առաջընթացը:

Նախագծային աշխատանք

Պարզ նախագծային աշխատանքներ կարող են իրականացվել նաև տարրական կրթական աստիճանում, հիմնական կրթական աստիճանի 5-6-րդ դասարաններում նույնպես՝ ըստ ցանկության և ուսուցողական նպատակով, իսկ 7-12-րդ դասարաններում առնվազն մեկ նախագծային աշխատանքի կատարումը պարտադիր է յուրաքանչյուր սովորողի համար: 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում նախագծային աշխատանքների ողջ ընթացքում պետք է կատարվի ձևավորող գնահատում, իսկ արդյունքներն ամփոփվեն՝ բնութագրով, 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից մինչև 6-րդ դասարանը ներառյալ՝ նախագծի արդյուքները կարող են ամփոփվել և՛ բնութագրով, և՛ միավորով, իսկ 7-12-րդ դասարանում՝ միավորով: Սակայն հատկանշականն այն է, որ նախագծի մշակման ողջ ընթացքում ուսուցիչը պետք է իրականացնի արդյունավետ ձևավորող գնահատում և հետադարձ կապ: Նախագծային աշխատանքների կատարման մեթոդաբանությունը նկարագրված է «Ամփոփիչ գնահատում» բաժնում:

Հետադարձ կապ

Ձևավորող գնահատման բաղադրիչների շրջափուլում կարևոր է հատկապես հետադարձ կապի տրամադրումը: Ցանկացած աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու իրենց ձեռքբերումները, աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները և բարելավելու իրենց բացթողումները:

Հետադարձ կապն ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների և ուսուցչի կատարած որոշակի գործողությունների վերաբերյալ փոխադարձ համարժեք արձագանքն է: Այսինքն՝ հետադարձ կապը միջոց է ուսուցչի գործողություններին սովորողների կողմից, սովորողների կողմից ուսուցչի գործողություններին տրվող անդրադարձի: Հետադարձ կապ

ապահովելիս ուսուցիչը պետք է սովորողին ուղղի քաջալերող խոսք, հուշումներ, ստուգող բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն նրան հասկանալ իր ուժեղ կողմերը, բացահայտել բացթողումները և ուսումնառության արդյունքը բարելավելու ուղիներ գտնել:

Այսպիսով՝ հետադարձ կապի նպատակը սովորողի ուսումնառության առկա մակարդակն ակնկալվող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է: Սա նշանակում է, որ հետադարձ կապի համար ընտրված զանազան միջոցներն ու հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու, իր ձեռքբերումները խորացնելու, թերացումներն արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից:

Հետադարձ կապը լինում է երկու տեսակի՝ արտաքին և ներքին:

Արտաքին հետադարձ կապն ապահովում է ուսուցիչ - սովորող, սովորող - ուսուցիչ կամ սովորող - սովորող կապերը: Ուսուցիչն ու սովորողները միմյանց կատարած գործողությունների վերաբերյալ իրականացնում են համապատասխան վերլուծություններ՝ փոխադարձաբար անդրադառնալով աշխատանքում եղած ձեռքբերումներին և թերություններին:

Ներքին հետադարձ կապն ուսուցչի և սովորողների սեփական գործողությունների նկատմամբ կատարած ինքնաանդրադարձն է: Ե՛վ ուսուցիչը, և՛ սովորողը կարիք ունեն ինքնավերլուծության: Ուսուցիչը ստացված արդյունքները վերլուծելով՝ բացահայտում է իր գործողությունների ստացված և չստացված պահերը, դրանց հիման վրա պլանավորում հետագա գործողությունները, իսկ աշակերտը իր գործողությունները վերլուծելով՝ բարելավում է իր ուսումնառությունը:

Հետադարձ կապի իրականացման միջոցները

Բանավոր զրույց. երբ վերլուծությունները և շտկումները կատարվում են բանավոր քննարկման միջոցով: Հարցուպատասխանի, տարբեր հարցերի վերհանման միջոցով բանավոր քննարկվում են այն գործողությունները, որոնք բարելավման կարիք ունեն, ինչու չէ, նաև հնարավոր է նորից ընկերների կամ ուսուցչի օգնությամբ անդրադառնալ այն կետերին, որոնք կօգնեն վերացնել աշխատանքի թերությունները:

Գրավոր մեկնաբանություն. երբ վերլուծություններն ու բարելավման առաջարկներն իրականացվում են գրավոր:

Գծապատկեր. երբ ուսուցիչը հետադարձ կապը տալիս է գծապատկերների միջոցով: Այս միջոցը բարձրացնում է տեղեկատվության յուրացման արդյունավետությունը, քանի որ ուսուցչի՝ սովորողին կամ սովորողներին ուղղված խոսքը ուղեկցվում է նշաններով և գծանկարներով, որոնք կարող են լինել նախապես պայմանավորված նշաններ, սիմվոլներ, հուշող պատկերներ և այլն:

ՏՀՏ միջոցներն արդեն անդառնալի կերպով մուտք են գործել ուսուցման բոլոր գործընթացներ, հետևաբար այս հնարավորությունը նույնպես պետք է օգտագործել արդյունավետորեն: Տեղեկույթը, վերլուծությունները սովորողի համար դառնում են ավելի հետաքրքիր և արդիական, երբ իրենց հետ շփվում են, այսպես կոչված՝ «ընդունելի միջոցներով»:

Արդյունավետ հետադարձ կապ ապահովելու համար, օրինակ՝ տեսագրությունը, ձայնային հաղորդագրությունները հնարավորություն են ընձեռում կատարված աշխատանքին կարճ և դիպուկ վերլուծություն կամ մեկնաբանություն տալու:

Արդյունավետ հետադարձ կապ ապահովելու համար անհարժեշտ է պահպանել հետևյալ սկզբունքները.

Անհատական. երբ սովորողը հասկանում է, որ ուղղորդող և շտկող հարցերն ուղղված են հենց իրեն, այլ ոչ ամբողջ դասարանին:

Օբյեկտիվ և նրբանկատ. հետադարձ կապի միջոցով պետք է մանրամասն նկարագրել սովորողի գործողությունները և բացառել հուզական գնահատականը նրա կատարած քայլերին: Սովորողի համար բավականին տհաճ է և տեղին չէ, երբ իրեն քննադատում կամ պարսավում են այս կամ այն սխալի համար: Բայց եթե նրա նկատմամբ օբյեկտիվ են, այսինքն՝ վերլուծում են իր աշխատանքը, այլ ոչ թե իրեն՝ մեղադրում կամ հեգնում, նա դրական և պատրաստակամ է մոտենում վերլուծական աշխատանքին:

Բացթողումների պատճառների վերհանում. **և** սովորողի կատարած քայլերի վերլուծությունը, թույլ է տալիս նրան ինքնուրույն հասկանալ և շտկել իր կատարած բացթողումները: Հետադարձ կապն ամբողջովին պետք է կր ուսուցանող բնույթ, ուստի կարևոր է ոչ թե ուղիղ ձևով սովորողին իր սխալները ցույց տալը, այլ հարցերի և պարզաբանումների միջոցով նրան օգնելը, որ դրանք ինքնուրույն գտնի:

Ճիշտ տեղին և ժամանակին. հետադարձ կապը պետք է տալ այն ժամանակ, երբ հարցերի ճշգրտումը տեղին է և ժամանակին: Այս սկզբունքի իմաստը հետադարձ կապի ժամանակավրեպ չլինելու մասին է: Ուսուցիչը պետք է հնարավորություն և ժամանակ տա սովորողին իր սխալները գտնելու և շտկելու, քանի դեռ նա գործընթացի մեջ է:

Մոտիվացիայի ապահովում. Երբ հետադարձ կապի մեջ շեշտադրվում է սովորողի ձեռքբերումները՝ դրանով ապահովելով նրա դրական տրամադրվածությունն ու մոտիվացիան: Հաճույքով կատարված աշխատանքի արդյունավետությունը սովորաբար ավելի բարձր է լինում:

Կարճ և հետաքրքիր. Կարելի է յուրաքանչյուր սխալի համար տրամադրել կարճ տեղեկություն՝ համեմելով խաղային կամ այլ հետաքրքիր տարրերով:

Այս բոլոր հնարները կարելի է ոչ միայն կիրառել ուսուցիչ – սովորող փոխհարաբերություններում, այլ նաև կարելի է պարզեցնել և հարմարեցնել սովորող – սովորող համագործակցության համար: Նշենք այն անհերքելի միտքը, որ ավելի լավ սովորում է նա, ով սովորեցնում է: Հետևաբար, արդյունավետ հետադարձ կապ պետք է ապահովել նաև սովորողների միջև:

Հետադարձ կապը կարելի է համարել հաջողված, եթե այն համապատասխանում է հետևյալ երեք կանոններին.

Ընկալում. երբ սովորողի մոտ ձևավորվել է հստակ պատկերացում իր ուժեղ կողմերի և նրանց զարգացման հնարավոր ուղիների մասին:

Ընդունում. երբ սովորողը ստացած տեղեկատվությունը ընդունում է և ներքին համաձայնության գալիս դրանց հետ:

Հեռանկար. երբ սովորողն ունի ցանկություն ուղղելու սեփական սխալները, և նա արդեն կատարել է առաջին քայլերն իր գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Ընդհանրացնելով կարող ենք ավելացնել, որ հետադարձ կապը ուսուցման և ուսումնառության անբաժանելի մասն է: Որքան այն արդյունավետ է, որքան շեշտադրվում են սովորողների ձեռքբերումները և իրականացվում է աշխատանքի պատշաճ վերլուծություն, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ սովորողները շարունակաբար կբարելավեն իրենց առաջադիմությունը:

Շատ կարևոր է որ ուսումնառության ողջ ընթացքում սովորողն իրեն հարգված և կարևորված զգա, հասկանա, որ իր կրթության հանդեպ առկա է պատասխանատու և հետևողական վերաբերմունք:

Ամփոփիչ գնահատում

Ամփոփիչ գնահատման նպատակն է՝ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողների ուսումնական ձեռքբերումների գնահատումը՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

Հաստատության 1-4-րդ դասարանների և 5-րդ դասարանի (առաջին կիսամյակ) սովորողների կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով:

Պետական ամփոփիչ ատեստավորումը իրականացվում է հանրակրթական հիմնական ծրագրերի աստիճանի ավարտին՝ կրթության կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանած կարգով:

Ամփոփիչ գնահատումը իրականացվում է միավորային և բնութագրող գնահատման միջոցով:

ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողների ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է, որն արտահայտվում է նիշերով:

Միավորային գնահատման համար կիրառվում է սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման 10-միավորային սանդղակ, որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:

Միավորային գնահատման արդյուքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում:

Միավորային գնահատման անհնարինության դեպքում դասամատյանում գրանցումներն արվում են հետևյալ նշաներով՝

1. սովորողի բացակայության դեպքում՝ «բ».
2. պատասխանելուց հրաժարվելու, գրավոր աշխատանքը չկատարելու դեպքում՝ «-»:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի միավորային գնահատումն իրականացվում է գնահատման ընդհանուր սկզբունքով՝ 10-միավորային սանդղակով:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) թեստ
2) բանավոր հարցում
3) գրավոր աշխատանք
4) գործնական աշխատանք
6) նախագծային աշխատանք

Թեմատիկ աշխատանք

Թեմատիկ գրավոր աշխատանքն ամփոփիչ գնահատման ձև է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է հիմնականում գրավոր: Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է լինել նաև բանավոր, գործնական կամ դրանց համադրմամբ:

Այդ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա ուսուցանելուց հետո, որի նպատակն է պարզել, թե սովորողները որքանով են յուրացրել թեմայից ուսումնասիրած նյութը:

Թեմատիկ գրավոր աշխատանքի արդյունավետ ձև է **թեստը**, որը նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակի ծախսով առավելագույն արդյունք է ապահովում:

Կազմելիս շատ կարևոր է պարզ պատկերացնել այն ուսում-նական նպատակը, որի համար այն նախատեսված է: Առանց նպատակի հստակեցման՝ թեստը հիմնականում վերածվում է առաջադրանքների անհասկանալի համախմբի:

Թեստային աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշիչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով: Առաջադրանքները կարող են տրվել հարցարաններով, որոնցում ներառվում են տարաբնույթ առաջադրանքներ, դրանցից են.

- ճիշտ պատասխանի ընտրության,
- համապատասխանեցման,
- լրացման,
- կարճ պատասխանով,
- ընդարձակ պատասխանով,
- ստեղծագործական և այլն:

Թեստի միջոցով բացի սովորողի գիտելիքից, հնարավոր է ստուգել նաև հմտություններն, արժեքային համակարգը և վերաբերմունքը (հատկապես տարրական դասարաններում, հասարակագիտական առարկաներում և կախված առարկայի առանձնահատկություններից):

Թեստի հիմնական հատկորոշիչները, որոնք կազմում են, այսպես կոչված, թեստի «նախագիծը», որոշում են թեստի կառուցվանքն ու բովանդակությունը: Դրանք են՝

- Ո՞ր դասարանի համար է նախատեսված:
- Ո՞ր թեմայի կամ թեմաների վերաբերյալ է կազմված:
- Ի՞նչ կոնկրետ նպատակ է հետապնդում:
- Ո՞ր վերջնարդյունքներն են ստուգվելու:
- Ի՞նչ տիպի առաջադրանքներ են մշակվելու:
- Քանի՞ հարց է ներառվելու:
- Որքա՞ն ժամանակ է հատկացվելու թեստին:
- Որքան միավոր է տրվելու յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար:

Ունենալով թեստի հատկորոշիչները՝ ուսուցիչը հեշտությամբ կարող է ստեղծել տարբեր թեստեր, ինչպես նաև թեստի տարբերակներ:

Թեստը կազմելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ: Թեստը համարվում է **հուսալի**, եթե թեստի արդյունքները գրեթե նույնն են տարբեր օրերին նույն խմբին ստուգելու դեպքում, կամ միաժա-մա-նակ երկու համարժեք թեստերի տրամադրման դեպքում ստացվում են

գրեթե նույն արդյունքները: Հուսալիությունն ստուգման արդյունքում գրանցված միավորի հարաբերական կայունությունն է:
Թեստը պետք է լինի **հավաստի**, այսինքն, ստուգի այն գիտելիքը, կարողությունն ու հմտությունը, որը նախատեսված է ստուգել: Օրինակ՝ լեզուներում, եթե ուզում ենք ստուգել գրելու կամ կարդալու որևէ հմտություն, ապա ընտրված վարժությունը պետք է ստուգի միմիայն այդ հմտությունը: Որպեսզի թեստը հավաստի լինի, պետք է առաջադրանքների տիպերը կամ ձևաչափը ծանոթ լինի սովորողներին:

Թեման ամփոփող աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ աստիճանի բարդության առաջադրանքներ:
1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում թեմատիկ աշխատանքի արդյունքները ամփոփվում են **բնութագրով**, իսկ 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարան՝ միավորով: Թեմատիկ աշխատանքների վերլուծության արդյունքները օգտագործվում են սովորողի ուսուցման ընթացքը բարելավելու նպատակով:
Թեմատիկ աշխատանքների արդյունքների ցուցանիշները պայմանավորված են նաև գնահատման տեսակների՝ հայտորոշման և ձևավորող գնահատման արդյունավետ իրականացման ընթացքից և ճիշտ հերթագայումից:
Այդ աշխատանքները կարող են գնահատվել միավորային տարբեր սանդղակներով, բայց պաշտոնական գրանցման համար դրանք պետք է բերել 10- միավորային սանդղակի:
Թեմատիկ գրավոր աշխատանքներ կարող են համարվել նաև ռեֆերատը, էսսեն, գործնական աշխատանքը:

Ուսումնական նախագծի գնահատումը
Հանրակրթության պետական նոր չափորոշչով (ՀՊՉ) նախատեսված է, որ 7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր սովորող պետք է տարվա մեջ իրականացնի առնվազն 1 նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից (ՀՊՉ, IX, 46):
Ուսումնական նախագիծը ըստ տևողության կարող է լինել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ, ըստ մասնակիցների քանակի՝ անհատական և խմբային, ըստ բովանդակության՝ որևէ առարկային վերաբերող, միջառարկայական և ինտեգրված:
Ուսումնական նախագիծն իրականացվում է 3 հիմնական փուլերով՝ նախապատրաստում, ընթացք և ամփոփում:
Ներկայացնենք ուսումնական նախագծի գնահատման ընդհանուր մոտեցումները: Անհատական կամ խմբային նախագծերի դեպքում գնահատման չափանիշների մեջ առկա են որոշակի առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն գնահատում իրականացնելիս:
Պետք է հաշվի առնել նաև, որ ուսումնական նախագծի իրականացման ժամանակ կարևորվում են ինչպես ընթացիկ աշխատանքները, այնպես էլ արդյունքներն ու դրանց ներկայացումը: Ուստի անհրաժեշտ է ուսումնական նախագծի նախապատրաստական փուլից սկսած մինչև ամփոփում իրականացնել ձևավորող գնահատում և այդ ընթացքում կատարել համառոտ գրառումներ, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում ամփոփիչ գնահատման ժամանակ տվյալներն օգտագործելու նպատակով:

Եթե ուսումնական նախագիծը գնահատվում է 10-միավորայինից տարբեր գնահատման սանդղակով, վերջնական միավորը փոխարկվում է 10-միավորայինի:
Եթե ուսումնական նախագիծը գնահատվելու է օրինակ՝ 20-միավորային սանդղակով, կարելի է միավորները բաշխել հետևյալ սկզբունքով.

Ընթացքը – 6 միավոր, ընդ որում՝

- նախապատրաստական փուլ (թեմայի ընտրություն, նպատակի սահմանում, դերերի բաշխում՝ եթե խմբային է) - 1 միավոր
- բուն ընթացք (խնդիրների ձևակերպում, հարցերի մշակում, պլանի կազմում, ժամանակի բաշխում, ռազմավարությունների ընտրություն, աղբյուրների ուսումնասիրում, տեղեկության հավաքագրում և վերլուծություն) - 4 միավոր
- ավարտ կամ ամփոփում (վերջնական մշակում, աշխատանքի ձևավորում) - 1 միավոր

Բովանդակությունը – 8 միավոր, ընդ որում՝

- համապատասխանությունը թեմային - 3 միավոր
- ամբողջականությունը - 2 միավոր
- հիմնավորվածությունը - 2 միավոր
- գրագիտությունը - 1 միավոր

Ներկայացումը – 6 միավոր, ընդ որում՝

- ձևը/միջոցը (սահիկաշար, ֆիլմ-հոլովակ, երաժշտություն, համերգ, նկար, պաստառ, գրքույկ, բեմականացում և այլն) - 3 միավոր
- խոսքը - 3 միավոր

Ուսումնական նախագծի գնահատման համար վերոնշյալ բաղադրիչներով պետք է սանդղակ (ռուբրիկ) ստեղծել, որտեղ բաղադրիչներից յուրաքանչյուրը գնահատվում է կատարման 4 մակարդակով՝ նվազման կարգով: Յուրաքանչյուր բաղադրիչի համար որոշվում է հաղթահարված մակարդակը և նշվում համապատասխան միավորը, վերջում բոլոր միավորները գումարվում են, և ստացված վերջնական միավորը փոխարկվում է 10-միավորային սանդղակին համապատասխան միավորի և մոտարկվում:
Նախագծի գնահատման սանդղակի օրինակը տես՝ հետևյալ հղմամբ.
https://kznakgnahatum.blogspot.com/p/7-12-1-ix-46-3-10-10-20.html

ԳՆԱՀԱՏՄԱՆ 10 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ

Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ:
Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է սույն կարգի 34-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով:
Սովորողի տարեկան գնահատականը ձևավորվում է կիսամյակային գնահատականների միջին թվաբանականով:
Սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման համար ներկայացված 10-միավորային սանդղակի գնահատման միավորների բնութագրիչները ընդհանրական են, որոնք հստակեցվում և տեղայնացվում են ըստ առանձին ուսումնական առարկաների և ըստ գնահատման տարբեր ձևերի:

Միավորը	Բնութագրիչները
1	Ճանաչում է ուսումնական նյութի որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ և գործողություններ:
2	Ճանաչում և տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտներ, իրականացնում է պարզագույն գործնական գործողություններ՝ ըստ օրինակի:
3	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի փոքր մասը, իրականացնում է մտավոր և գործնական պարզ գործողություններ՝ ըստ օրինակի:
4	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի առնվազն կեսը, օրինակ՝ նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները բանավոր կամ գրավոր ձևերով, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներն առանց մեկնաբանության, իրականացնում է մտավոր և գործնական ոչ բարդ գործողություններ՝ ըստ օրինակի:
5	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ էական հատկանիշները առանց դրանց բացատրության, իրականացնում է գործնական և մտավոր գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի:

6	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով:
7	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութն ամբողջ ծավալով, կիրառում է սովորածը ծանոթ իրավիճակում, նկարագրում և բացատրում է ուսումնասիրվող օբյեկտները, հայտնաբերում և հիմնավորում է առերևույթ կապերը, փորձառությունից օրինակներ է բերում, կատարում է վարժություններ, խնդիրներ և առաջադրանքներ ծանոթ իրավիճակում՝ ցուցումների հիման վրա:
8	Տիրապետում է ուսումնական նյութին և կիրառում ծանոթ իրավիճակում, մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է էությունը, հիմնավորում և ապացուցում՝ փաստերով, եզրակացություններ է անում, ինքնուրույն կատարում է առաջադրանքները:
9	Լիարժեք տիրապետում է ուսումնական նյութին, կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ, ցուցաբերում է ստեղծագործական մոտեցումներ:
10	Լիարժեք կիրառում է ուսումնական նյութը անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է ստեղծագործական հմտություններ:

Բարդության տարբեր աստիճանի առաջադրանքների բնութագրիչները

Բարդության 1-**ին աստիճանի առաջադրանքներ**.
Այս մակարդակի առաջադրանքները պահանջում են ճանաչում և տարբերակում, տեղեկույթի մտապահում և հիշողությամբ վերարտադրում, պարզ գործողությունների կատարում:
Արտագրելը, հաշվելը, ճանաչելը, անվանելը, օրինակով առաջնորդվելը բնորոշ են 1-ին աստիճանի բարդության առաջադրանքներին:

Բարդության 2-**րդ աստիճանի առաջադրանքներ**.
Այս մակարդակի առաջադրանքները պահանջում են չափորոշչային գիտելիքների բավարար իմացություն, ոչ բարդ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, ոչ բարդ հիմնավորումներ և չեն պահանջում ինքնատիպ մոտեցումներ:
Որոշում կայացնելը, համադրելը, տեղեկատվությունը վերլուծելը, ամփոփելը, կռահելը, հաշվարկելը, բացատրելը, դասակարգելը բնորոշ են 2-րդ աստիճանի բարդության առաջադրանքներին:

Բարդության 3-**րդ աստիճանի առաջադրանքներ**.
Բարդության այս աստիճանի առաջադրանքները կատարելիս սովորողները պետք է դրսևորեն աբստրակտ մտածողություն, կիրառեն պլանավորման և ապացուցման հմտություններ: Առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր իմացություն, բարդ, կամ ոչ լրիվ ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ենթադրում են ինքնատիպ մոտեցումներ:
Կառուցելը, արտածելը, հիմնավորելը, մի քանի արժանահավատ պատասխաններ ունենալը, ընտրությունը հիմնավորելը, ոչ ստանդարտ խնդիրներ լուծելը, փորձ նախագծելը, արժևորելը բնորոշ են 3-րդ աստիճանի բարդության առաջադրանքներին:

Բարդության 4-**րդ աստիճանի** (**առավել բարդ կամ աստղանիշով**) **առաջադրանքներ**.
4-րդ մակարդակի բարդության առաջադրանքները պահանջում են ճանաչողական մեծ ջանքեր, չափորոշչային գիտելիքների հիմնավոր և խոր իմացություն, բարդ կամ անծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, տարբեր աղբյուրներից ստացած տեղեկությունների համադրում:
Հարցաթերթ մշակելը, հարցում անցկացնելը և արդյունքները վերլուծելը, տարբեր տեքստերը վերլուծելը, պահանջվող ոճով տեքստ շարադրելը, ստեղծագործելը կամ հարցին ստեղծագործաբար մոտենալը, արժևորելը, վարկածներ առաջադրելը բնորոշ են 4-րդ աստիճանի բարդության առաջադրանքներին:

Մտավոր ծանր և խորը խնդիրներ ունեցող սովորողների համար թեմատիկ աշխատանքներում 1-ին աստիճաի բարդության առաջադրանքները կազմելիս՝ նպատակահարմար է ուղղորդվել ըստ ԱՈՒՊ-ի սահմանած նպատակների՝ հաշվի առնելով սովորողների մտավոր զարգացման առանձնահատկությունները և կարողունակության առկա մակարդակը:

Բնութագրող գնահատում

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը կազմվում է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի արդյունքները ամրագրելու նպատակով:

Բնութագրող գնահատումն իրականացվում է՝

1. 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին,
2. հիմնական տարրական կրթական ծրագրի ավարտին:

Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի ուսումնառության կիսամյակային արդյունքների ամփոփման նպատակով կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

Առաջադիմությունն արձանագրելու համար հիմք են հանդիսանում դասարանի ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները:

Բնութագրող գնահատման չափանիշները հստակեցվում և տեղայնացվում են ըստ առանձին ուսումնական առարկաների:

Բնութագիրը ձևավորվում է էլ. հարթակում և կցվում է սովորողի անձնական գործին:

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագրի կազմման հիմնական սկզբունքները

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից: Առաջադիմությունն արձանագրելու համար հիմք են հանդիսանում դասարանի ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները:

Ուսուցիչն ընտրում է թեմայի վերջնարդյունքները, որի վերաբերյալ սովորողի առաջընթացը ցանկանում է որոշել և վերջնարդյունքի ցուցիչներից ընտրում է սովորողի առաջընթացը ամենից լավ բնութագրող ցուցիչները: Սովորողի առաջընթացի վերլուծության արդյունքում ուսուցիչը որոշում է առաջընթացի բարելավման ուղենիշները: Ուղենիշներին համապատասխան ուսուցիչը որոշում է դրանց իրականացմանն ուղղված գործողությունները:

Յուրաքանչյուր աղյուսակի առաջին սյունակում տրված են տվյալ առարկայի ուսումնական ծրագրով սահմանված հիմնական հասկացություններն ու թեմաները (ԵՇԱ, Շախմատ, Մաթեմատիկա, Մայրենի և այլն), իսկ աղյուսակի առաջին տողում ներկայացված են Ա, Բ, Գ, Դ, Ե սյունակները՝ ցույց տալով առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների կատարման աստիճանը տվյալ կիսամյակի համար՝ նվազման կարգով:

Ամեն առարկայի ուսուցիչ կարող է կազմել յուրաքանչյուր սովորողի բնութագիրը՝ հաշվի առնելով հետևյալ ցուցումները.

Ցուցումներ բնութագրերի կազմման վերաբերյալ

Ներկայացված աղյուսակների Ա սյունակում ներկայացված են առարկայի ուսուցանվող թեմաների վերջնարդյունքները՝ ձևակերպված բնութագրի ձևով: Սյունակը ներկայացնում է վերջնարդյունքների ապահովման առավելագույն աստիճանը: Հաջորդ սյունակները ներկայացնում են յուրաքանչյուր վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները

նվազման կարգով: Վերջին՝ Ե սյունակում ներկայացված է վերջնարդյունքի ապահովման նվազագույն աստիճանը:
Ուսուցիչը կարող է յուրաքանչյուր սյունակի բնութագրերին ծանոթանալով՝ ընտրել յուրաքանչյուր երեխայի համար այն ձևակերպումները, որոնք առավելապես համապատասխանում են նրա ուսումնառության արդյունքներին կիսամյակի ավարտին: Այս աշխատանքը կատարելիս ուսուցիչը պետք է հիմնվի ողջ կիսամյակի ընթացքում կիրառած ձևավորող գնահատման արդյունքների (ստուգաթերթերի, համառող գրառումների, ռուբրիկների, դիտարկումների, հայտորոշիչ և ամփոփիչ առաջադրանքների և այլ գործիքների պարբերական կիրառման վերլուծությունների վրա):
Բնութագրերը կարող են կազմվել տարբեր սյունակների բնութագրումներից ընտրված նկարագրություններից՝ ամբողջացնելով սովորողի ամփոփ բնութագիրը տվյալ առարկայից: Նույն տողից միայն մեկ բնութագրիչ կարող է ներառվել կոնկրետ սովորողի բնութագրի մեջ, քանի որ յուրաքանչյուր տողում նկարագրված են նույն վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները: Չի բացառվում, որ սյունակներից մեկի բնութագրումները լիովին համընկնեն կոնկրետ սովորողի առաջադիմության արդյունքներին, սակայն առավել հաճախ դա կլինի տարբեր սյունակներից առանձնացված բնութագրիչներից կազմված խճանկար:

Հիմնական հասկացություն	**Թեմա**	**Ա** (Թեմայի վերջնարդյունք)	**Բ**	**Գ**	**Դ**	**Ե**

Բնութագրերի օրինակները տես՝ https://kznakgnahatum.blogspot.com/